ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Ն ՀՀՀ-ՄԱԵՁԲ-21/62-Պ

ք.Երևան 13-ը սեպտեմբեր 2021թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Վարձակալ), ի դեմս գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

«ԱՐԷՆԵՐԳՈ» սահմանափակ պատասխանատվության ընկերությունը (այսուհետ՝ Վարձատու), ի դեմս տնօրեն Տիրգրան Գասպարյանի մյուս կողմից,
(այսուհետ յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր),

կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Վարձատուն վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանն է հանձնում սեփականության իրավունքով իրեն պատկանող Տեսանկարահանման կռունկ CamMate 2032 (այսուհետ նաև՝ Շարժական գույքը).
Շարժական գույքի տեխնիկական բնութագիրը.

CamMate 2032 -ը իրենից ներկայացնում է հեռավար կարգավորվող համայնապատկերման /թեքվածքի գլխիկ - կոնտրոլեր, համայնապատկերման /թեքվածքի կառավարման ջոյստիկ, մասշտաբավորման զուումի կարգավորման գլխիկի բարձակներ, երկու ոչ մեծ շարժիչներ (շարժիչներ դիաֆրագմայի/ֆոկուսացման), կոշտ պատյաններ գլխիկների և էլեկտրոնիկային նախատեսված տեղափոխման համար (CamMate 360 աստիճան համայնապատկերում, ատրճանակային դաստապան, թեքվածքի, զումի, ֆոկուսի դիաֆրագմայի կառավարում և հակակշիռներ)

- Ոսպնյակների բարձրություն: 29' 5" - 8.97մ
- Կռունկի սլաքը 26' 6" - 8.08մ
- Ընդհանուր երկարությունը: 31 '7 "- 9,63 մ
- Հակակշիռները: 534 ֆունտ. - 242,22 կգ
- Կռունկի քաշը: 202 ֆունտ - 91,62 կգ

1.2. Շարժական գույքը կալանքի, արգելանքի տակ չի գտնվում, դրա նկատմամբ չկան գրանցված սահմանափակումներ:
1.3. Շարժական գույքը Վարձատուի կողմից Վարձակալին է տրամադրվելու հոկտեմբերի 1-ին:
1.4. Վարձակալության հանձնված Շարժական գույքի նկատմամբ Վարձակալի կողմից սույն պայմանագրով նախատեսված վճարումներն ամբողջությամբ կատարելուց հետո Շարժական գույքն անցնում է Վարձակալի սեփականությանը:
1.5. Վարձակալը կարող է ենթավարձակալության տալ վերոհիշյալ գույքը կամ այլ ձևով օտարել դրա օգտագործման իրավունքը՝ առանց Վարձատուի համաձայնությամբ:
1.6. Կողմերը երաշխավորում և հավաստում են, որ իրավասու են ստորագրելու սույն Պայմանագիրը և ունեն սույն Պայմանագիրը կատարելու համար բոլոր անհրաժեշտ իրավունքները, թույլտվությունները և համաձայնությունները:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1.Վարձատուն իրավունք ունի՝

2.1.1.Վարձակալից պահանջել Շարժական գույքն օգտագործելու սույն պայմանագրի պայմաններին և դրանց նշանակությանը համապատասխան.

2.1.2. Վարձակալից պահանջել վճարել կետանցված վարձավճարի համար օրական տույժ 0,003 տոկոսի չափով, որը հաշվարկվում է կետանցված գումարի վրա կետանցված օրերի համար տույժի ընդհանուր չափը չի կարող գերազանցել կետանցված գումարի չափը.

2.2.Վարձատուն պարտավոր է՝

2.2.1. Շարժական գույքը Վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին, ժամկետներին և Շարժական գույքի նշանակությանը համապատասխան:

2.2.2. Շարժական գույքը պայմանագրով սահմանված ժամկետից ուշ տրամադրման դեպքում Վարձատուն վճարում է օրական տույժ 0,003 տոկոսի չափով, որը հաշվարկվում է կետանցված գումարի վրա կետանցված օրերի համար:

2.2.3. Սույն պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները չփոխանցել այլ անձանց առանց Վարձակալի համաձայնության

2.2.. Շարժական գույքի վրա որևէ սահմանափակում կիրառվելու դեպքում Վարձակալին վերադարձնել սույն պայմանագրի 3.1 կետով նախատեսված և իրեն վճարված գումարի 90 տոկոսը, եթե այդպիսի սահմանափակումն առաջացել է ոչ Վարձակալի մեղքով և խոչընդոտ է հանդիսանում սահմանված ժամկետում Շարժական գույքի նկատմամբ Վարձակալի սեփականության իրավունքի ծագման համար կամ այդպիսի սահմանափակումը /գրավ, արգելանք, ապահովված իրավունք և այլն/ կարող է Վարձակալի կողմից միակողմանիորեն դիտարկվել ոչ շահավետ Շարժական գույքը սեփականության իրավունքով ձեռք բերելու համար: Սույն կետով նախատեսված գումարը Վարձատուի կողմից Վարձակալին վճարվում է, եթե այդ մասին /այդ թվում նաև ոչ շահավետ դիտարկելու մասին/ գրավոր ծանուցում է ուղարկվում Վարձակալի կողմից: Այն պարագայում, երբ համապատասխան սահմանափակումներն ի հայտ են գալիս սեփականության իրավունքը Վարձակալին անցնելուց հետո սույն կետով նախատեսված գումարը ստանալու իրավունքը Վարձակալը պահպանում է պայմանով, որ համապատասխան գումարը ստանալուց հետո Շարժական գույքի նկատմամբ Վարձակալի սեփականության իրավունքը դադարում է ի օգուտ Վարձատուի տվյալ պարագայում Շարժական գույքի ետվերադարձի հետ կապված բոլոր լրացուցիչ ծախսերը /այդ թվում նաև ցանկացած հարկային պարտավորություն, որ կառաջանա Վարձակալի կամ Վարձատուի համար/ կրում է Վարձատուն:

2.3.Վարձակալը պարտավոր է՝

2.3.1. Ժամանակին վճարել Շարժական գույքն օգտագործելու համար սույն պայմանագրի 3-րդ գլխում նախատեսված վճարը (վարձավճարը).

2.3.2.Շարժական գույքը պահպանել պատշաճ վիճակում, իր հաշվին կատարել դրա/դրանց հիմնական և ընթացիկ վերանորոգումը՝ նախապես ստանալով Վարձատուի համաձայնությունը, և կրել Շարժական գույքը պահպանելու համար անհրաժեշտ ծախսերը.

2.3.3. Շարժական գույքն օգտագործել բացառապես դրանց նպատակային նշանակությանը, ինչպես նաև տեխնիկական անձնագրերով և այլ փաստաթղթերով սահմանված պայմաններով և նպատակներով:

2.3.4.Իր հաշվին ապահովել Շարժական գույքի սպասարկումը և ցանկացած այլ ձևով օգտագործումը:

2.4.Վարձակալն իրավունք ունի՝

2.4.1.Վարձատուից պահանջել իրեն տրամադրել Շարժական գույքի պատկանելիքներն ու դրան վերաբերող փաստաթղթերը:
2.4.2. Շարժական գույքի օգտագործմանն ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերություններ հայտնաբերելիս, իր ընտրությամբ՝
ա/ Վարձատուից պահանջել անհատույց վերացնելու Շարժական գույքի թերությունները կամ համաչափ իջեցնելու վարձավճարը կամ հատուցելու Շարժական գույքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը.
բ./ Վարձատուին նախապես տեղեկացնելով՝ վարձավճարից պահել տվյալ թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերի գումարը.
գ/Պահանջել նվազեցնելու վարձավճարի չափը, եթե հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում, Շարժական գույքի վիճակը վատթարացել է.
դ/ Պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները ոչ ավել քան սույն պայմանագրով նախատեսված գույքի արժեքն է,
2.4.3 Սույն պայմանագրի ձևակերպման հետ կապված ծախսերը կատարվում են Վարձատուի կողմից:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Սույն Պայմանագրով Շարժական գույքի համար վճարման ենթակա ամբողջական վարձավճարի չափը կազմում է 7 000 000 (յոթ միլիոն) ՀՀ դրամ /առանց հարկերի/:
3.2. Սույն Պայմանագրի 3.1 կետով սահմանված գումարը Պատվիրատուն վճարում է Կատարողի բանկային հաշվեհամարին անկանխիկ փոխանցմամբ հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-վավերագրի երկկողմանի հաստատվելուց հետո, առաջին վճարումը իրականացվելու է 2022թ. հունվար ամսին՝ արժեքի 50% չափաբաժնով, իսկ հաջորդիվ երեք մասով վճարումները՝ հավասարաչափ համապատասխանաբար երեք ամիսների ընթացքում: Վարձակալության գումարը ամբողջովին վճարելուց հետո նշված Շարժական գույքն անցնում է Վարձակալին սեփականության իրավունքով:
3.3. Վճարման ամսաթիվ է համարվում Պատվիրատուի բանկային հաշվից դրամական միջոցների ելքագրման ամսաթիվը:
3.4. Բանկային ծախսերը Պատվիրատուի բանկում կատարում է Պատվիրատուն, իսկ Կատարողի բանկում՝ Կատարողը:

4. ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

4.1. Շարժական գույքը Վարձակալին հանձնելուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Վարձատուն Վարձակալին է ներկայացնում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտը:
4.2. Հանձնման-ընդունման ակտը ներկայացնելու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Վարձակալը Վարձատուի աջակցությամբ ստուգում է Շարժական գույքի որակը և առարկությունների բացակայության դեպքում հաստատում հանձնման-ընդունման ակտը:
4.3. Այն դեպքում, երբ Շարժական գույքում հայտնաբերվում են թերություններ, Վարձակալը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և սույն Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում Վարձատուին գրավոր ներկայացնում է հանձնման-ընդունման ակտը չհաստատելու հիմնավորում՝ նշելով Շարժական գույքում հայտնաբերված թերությունները և սահմանելով դրանց վերացման ողջամիտ ժամկետ: Վարձատուի կողմից հայտնաբերված թերությունները

չշտկելու դեպքում սույն Պայմանագրի 2.1.5 կետով սահմանված կարգով միակողմանի լուծում է Պայմանագիրը:

4.4. Այն դեպքում, եթե Վարձակալը սույն Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում չի հաստատում հանձնման-ընդունման ակտը և Վարձատուին չի ներկայացնում դրա հիմնավորումը, հանձնման-ընդունման ակտը համարվում է հաստատված Վարձակալին ներկայացնելու ամսաթվով, Վարձատուն Պայմանագրով սահմանված ժամկետում վճարել դրանով նախատեսված գումարը:

5.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կողմերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գույքային պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

5.2.Տուժանքի (տուգանքի կամ տույժի) վճարումը կողմերին չի ազատում նրանց վրա դրված պարտականությունները կատարելուց կամ խախտումները վերացնելուց:

5.3 Շարժական գույքի նկատմամբ այնպիսի հիմքերով Վարձակատուի սեփականության իրավունքի դադարման և/կամ սահմանափակման դեպքում /ռեկվիզիցիա, բացառիկ գերակա հարնրային շահ և այլ համանման դեպքեր/, երբ Վարձակալը չի կարող այլևս օգտագործել Շարժական գույքը ոչ Վարձատուի մեղքով, Վարձատուն պարտավորվում է հատուցել Վարձակալի վնասներն առավելագույնը այն չափով, ինչքանով Վարձատուին տրամադրված կլինի հատուցում այդ տեսակի վնասները հատուցելու համար:

5.4 Շարժական գույքի հանձնման-ընդունման պահից հետո Շարժական գույքի օգտագործման և ոչ պատշաճ պայմաններում պահպանման հետևանքով առաջացած բոլոր թերությունների պատասխանատվությունը կրում է Վարձակալը:

6.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Սույն պայմանագրով Շարժական գույք վարձակալության է տրվում մինչև 2022թ. մայիսի 31-ը ներառյալ:

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ

7.1 Պայմանագիրը ժամկետից շուտ կարող է լուծվել սույն պայմանագրով և ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

7.2. Սույն պամաանգրի 3.1 կետով նախատեսված գումարն ամբողջությամբ վճարվելուց հետո Վարձակալը ձեռք է բերում սեփականնության իրավունք Շարժական գույքի նկատմամբ և վարձակալության դրույթները դադարում են թեկուզև վարձակալության ժամկետը դեռևս լրացած չլինի՝ հաշվի առնելով պարտավորության մեջ անձանց համընկնման հիմքով պատրատվորության դադարման սկզբունքը:

8.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն պայմանագրի պայմանների փոփոխությունները, լրացումները կատարվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ, որը ձևակերպվում է լրացուցիչ համաձայնագրով::

8.2. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է համապատասխան դատարանի քննությանը:

8.3. Սույն պայմանագրի կնքման պահին Շարժական գույքը ամբողջությամբ իր պատկանելիքներով, ինչպես նաև անհրաժեշտ բոլոր փաստաթղթերով պատշաճ վիճակում փոխանցվել է Վարձատուին:
8.4. Կողմերի բնակության վայրի կամ այլ վավերապայմանների փոփոխման դեպքում նրանք պարտավոր են եռօրյա ժամկետում միմյանց գրավոր տեղեկացնել տեղի ունեցած փոփոխությունների մասին:
8.5. Սույն պայմանագիրը կողմերի համաձայնությամբ կազմված է հայերեն լեզվով, 2 /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որոնցից մեկը տրվում է Վարձատուին, իսկ մյուսը՝ Վարձակալին:

ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վարձակալ
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26

ՀՎՀՀ՝ 01540062

«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000

Հովհաննես Մովսիսյան
Գործադիր տնօրեն

Վարձատու
«ԱՐԷՆԵՐԳՈ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նոր Նորքի 8-րդ զանգված 36-71

ՀՎՀՀ՝ 00890843

«Ակբա բանկ» ԲԲԸ
Հ/Հ՝ 220463330401000

Տիգրան Գասպարյան
Տնօրեն